ԳԼՈՒԽ ԼԳ
ԿՌԻՎ ԿՆՈՋ ԵՎ ԳԱՅԼԻ ՄԻՋԵՎ

Երբ շահը Երևանը գրավեց, այստեղ իշխան նշանակեց Ամիրգունա խանին և նրան պատվիրեց բերդը նորոգել, այգիներ տնկել և շինարարության նկատմամբ փութաջան լինել: Այս պատճառով բոլորը սկսեցին շինել և այգիներ տնկել: Մի մահմեդական էլ այգի տնկեց և Կոտայքից Սարգիս անունով մի մարդ բերեց կնոջ հետ, որ ուներ ծծկեր երեխա: Սարգսին նշանակեց իր նորատունկ այգու պահապան: Իսկ Սարգիսը որթատունկերի մեջ ցանեց վարունգ, սեխ, ձմերուկ և կանաչեղեն: Ամուսինը (Սարգիսը) ցերեկը գնում էր բերդի վրա բանվորության, իսկ կինը այգին ու բանջարանոցն էր խնամում: Երեկոյան փայտե սանդուղքով ելնում էին հնձանի տանիքը գայլերի ահից և սանդուղքը քաշում էին վեր: Օրերից մի օր Սարգիսը ըստ իր սովորության գնաց իր բանվորությանը, իսկ կինը օրորոցը երեխայով իջեցրեց, դրեց հնձանը և դուռը չփակեց, գնաց բանջարանոցը մշակելու: Մի գայլ նկատելով այդ, գնաց դուռը բացեց և մտավ ներս, դուռը իրեն-իրեն ծածկվեց: Գայլը բռնեց երեխայի կապանքներից և կամենում էր պատառոտել երեխային, իսկ կինը լսելով դռան ծածկվելու ձայնը, մտածեց, թե գուցե մեկնումեկը մտավ հնձանը ինչ-որ բան գողանալու: Գնաց տեսավ, գոռաց և բռնեց գայլի ականջներից, քաշեց, որ ազատի մանկանը, բայց չկարողացավ: Եվ կինը քարշ էր տալիս գայլին, իսկ գայլը բաց չէր թողնում մանկան կապերը: Կինը քաշելով հասավ դռանը, բացեց և գոռաց դրացի կանանց, և երկու կին լսեցին ձայնը և եկան տեսան կնոջ տառապանքը: Մի կինը վերցրեց քաղհանի ուրագը, մյուսն էլ՝ մի մեծ բիր, խփեցին գայլին և սպանեցին: Իսկ երեխան բոլորովին չէր խոսում և շարժվում, կարծեցին, թե երեխան սպանված է: Մայրը բացելով երեխայի երեսը, իսկ երեխան ժպտաց մորը, իսկ մայրը ուրախությունից ուշաթափվեց, հազիվ ուշքի բերին: Այս բանը մենք լսեցինք Հովհաննավանքի առաջնորդ Զաքարիա վարդապետից, իսկ ինքը լսել էր Սարգսից՝ Երևանի անապատում 1080 (1631) թվին:

ԳԼՈՒԽ ԼԴ
ՔՈՒՐԴ ԱՎԱԶԱԿՆԵՐԸ ՇԱՐՈՒՐԻ ԴԱՇՏՈՒՄ

Ինչպես ասացինք, Ամիրգունա խանը Մովրովի դեմ պատերազմում խոցվեց, տարան Երևան: Ղոռչիբաշու մոտ էր Թահմազ բեկը՝ Ամիրգունա խանի որդին: Մարերի ցեղը լսեց, որ քրդերն են, Մասիս լեռան այն կողմից, միատեղվեց և մտածեց գալ Շարուրի դաշտը և ավարել: Այս լուրը հասավ Ամիրգունա խանին, այդ պատճառով իր որդի Թահմազ բեկին խիստ պատգամ հղեց և ասաց՝ տառապանքի և նեղության օրեր վրա հասան քեզ. արդ՝ ո՞ւմ վրա ես հույս դնում այդտեղ մնալով: Եվ երբ Թահմազ բեկը լսեց հոր պատգամը, խոր խոցվեց, այդ պատճառով առանց Ղոռչիբաշու գիտության առավ իր գունդը նույն օրը գնաց Գեղամա գավառը, մյուս օրը անցավ Վայոց ձոր, իսկ երրորդ օրը իջավ Վեդի կոչվող դաշտը և տեսավ, որ մարերը տարածված են դաշտավայրում: Թահմազը բարձր ձայնով գոչեց. Օն հեռու, ղզլբաշ, օն հեռու*: Եվ մեկը պարսիկների կողմից, այն էլ ոչ ազնվական, այլ ստորին ու վատ արհամարհանքով պատասխանեց և ասաց՝ բեշ բաթման տառունուն նա հավի օլուր**, որ ստույգ հայերեն այս է: Քանի որ հացի պակասություն կար, ուստի այդ մարդը՝ Ուլուֆան, կորեկ էր առել և այստեղ անարգանքով երեսով տվեց: Եվ մինչև այսօր առակ է ասվում այս երկրում: Այս խոսքի վրա պարսիկները թուլացան և պատերազմ մտնել չցանկացան. ուստի Թահմազ բեկն ինքը քիչ մարդկանցով մտավ քրդերի բանակը և սկսեց կոտորել: Զորքը տեսնելով՝ արհացան, սրանք էլ մտան պատերազմ և հաղթեցին քրդերին ու հալածեցին, գնացին մինչև այնտեղ, որ կոչվում է Այաղլուսարայ. այստեղ կանգնեցրին քրդերի սպիտակ դրոշակը, որ կոչվում է ալամ կամ բայրաղ:

Քրդերը տեսնելով իրենց դրոշակը (զինանշանը), կարծեցին ճշմարտություն է, ուստի գնացին նրա մոտ: Իսկ պարսիկները բռնում էին նրանց, կալանում ու կոտորում էին: Ավարեցին նրանց

* Քանաքեռցին տուր թարգմանել է հեռու, մինչդեռ տուր նշանակում է առաջ:

** Ի՞նչ առաջ հինգ բաթման կորեկով: